

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱԿԻՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԵՐՊԱՐԸ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Սուրբ Գրիգոր կամ Սուրբ Գրիգորիոս՝ Լուսավորիչ Հայաստան աշխարհի, ում հիշատակը Հայ Եկեղեցին նշում է տարեկան երեք տոների միջոցով<sup>1</sup>: Դրանցից առաջին երկուսն արտացոլում են արքի երկրային կյանքի առավել հանգուցակետային իրադարձությունները. վիրապ գետովելը՝ «Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ սոսկալի չարչարանացն եւ մտին ի Վիրապն», հրաշափատ վերադարձը վիրապի բանտից՝ «Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ ելն ի Վիրապէն», իսկ երրորդը նվիրված է Սեպուհ լեռան Մանեսա կայրոս Հայոց աշխարհի Լուսավորչի նշխարների գտնվելու խորհուրդին՝ «Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսատրչին մերոյ»:

«Չորեքսասաներորդ առաքեալ»<sup>2</sup> անվանվող Ս. Գրիգորը, իր հղացումը գտավ Ս. Թադեոս առաքյալի հանգստարանի մոտ, որից և ստացավ առաքելական շնորհը<sup>3</sup>: Ընդհանրական Եկեղեցու մեծագույն գործիչներից<sup>4</sup> «Երկնաքաղաքացի այր»<sup>5</sup>, որ լուսավորիչը և մկրտիչը եղավ ոչ միայն հայերի, այլև կովկասյան մյուս ժողովուրդների համար<sup>6</sup>, որին մեծակյացները ողջունում էին՝ ասելով. «Բարով եկար լուսոյ աստղ արդարութեան, (...) անպական մշակ, երկնից բարձր աշտարակ»<sup>7</sup>, նաև «քնար աստուածախօս և քաղցրանուագ»<sup>8</sup>, «արեգակնափայլ ջահ, անշիջանելի լուսովն լցեալ»<sup>9</sup> և այլն:

Դարերի ընթացքում հետզհետե ձևավորվել է Ս. Գրիգորի հետ կապված մի ամբողջ մշակութային ասպարեզ, որն ընդգրկում է մտավոր և գեղարվեստական գործունեության բազմաթիվ ոլորտներ: Ստեղծվել են նրա կյանքին և գործունեությանը նվիրված պատմագրական, վկայաբանական երկեր, նաև ներբողյաններ, որ հեղինակել են հայ և օտարազգի մեծերը՝ Հովհան Ոսկեբերանը<sup>10</sup>, Ագաթանգեղոսը<sup>11</sup>, Հովհաննես Երզնկացի Պլու-

<sup>1</sup> Շնորհք արք. Գալուստյան, Հայագի սուրբեր, Երևան, 1997, էջ 34:

<sup>2</sup> Նույն փնդում, էջ 27:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1997, էջ 186:

<sup>4</sup> Ինչպես հայերն է, Լուսավորիչը «համաքրիստոնեական ընդունկության և րոնակաբարության արժանացած է» (Շնորհք արք. Գալուստյան, Հայագի սուրբեր, էջ 27): Սրբի պաշտամունքի մասին, մասնավորապես, ռուս ուղղափառ եկեղեցուն րևն Круциания А., Песнопения святому священикомученику Григорию Епископу Великия Армения - Просветителю и древнерусской певческой традиции XII-XVII вв., Մանրուսում, միջազգային կրթչարագիտական փարեցիք, հապոր Ա, Երևան, 2002, էջ 176:

<sup>5</sup> Սոփերք հայկականք, Վենեփիկ, 1853, Ե-Զ-Է, էջ 103:

<sup>6</sup> Այս մասին րևն Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, С.-Петербург, 1905:

<sup>7</sup> Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 52:

<sup>8</sup> Սոփերք հայկականք, Ե, էջ 106:

<sup>9</sup> Նույն փնդում, էջ 103:

<sup>10</sup> Երանկոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի կախկոպոսապների Ներբողևան, ասացևայ յա-



Ան հանդես է գալիս տարբեր գործառույթներով.

ա) բարեխոս «առ Աստուած»՝

*«Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ.  
Սքանչելագործ վրկայ և պարծանք ազգի մարդկան՝  
Առ Քրիստոս բարեխօսեա վասըն մեր սօնողացս»<sup>17</sup>*

բ) առաջնորդ՝

*«Ով երջանիկ Տէր Սուրբ Գրիգոր՝  
Սրբութեանցըն պաշտօնեայ եւ առաջնորդ բանաւոր հօտի»<sup>18</sup>*

գ) Լուսավորչի տոհմի նահապետ՝

*«Այսօր ընդ երկնային զուարթունարն  
Ժողովուրդք Հայաստանեայց սօնելով գլիշատակ  
Սուրբ հայրապետաց շատաիդաց Սրբոյն Գրիգորի»<sup>19</sup>*

դ) նահատակ՝

*«Խոստովանող Քրիստոսի ճշմարիտ վկայ՝  
Բազմաչարչար նահատակ տէր Գրիգորիոս»<sup>20</sup>*

ե) որոշ շարականներում սուրբը ներկայացված է համադրված գործառույթներով՝ բարեխոս, լուսավորիչ, առաջնորդ՝ «Նմանեալ Մովսէսի» և այլն.

*«Արդ աղաչեմք ըզքեզ լուսատրիչ հոգւոց մերոց  
Նմանեալ Մովսէսի նախամարգարէին մեծի.  
Լուսափայլեալ դիմօք աստուածահրաշ տեպեամբ  
Բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց»<sup>21</sup>*

4. Սրբի գործառույթները ընդհանրացված են նրան նվիրված երկու կանոններում՝ «Կանոն սրբոյն Գրիգորի Բ. Լուսատրչին», առաջինը՝ «Այսօր զուարճացեալ» «իւր սարօքն»<sup>22</sup>, երկրորդը՝ «Ով երջանիկ», «իւր սարօքն»<sup>23</sup>:

5. Կանոնները կատարվում են Ս. Գրիգորի երեք տոներին, նաև դրանց նախորդող նախատոնակներին, եկեղեցու ատյանից, փոխեփոխ (դաս առ դաս) երգեցողությամբ:

6. Կանոններում շարականները մեծ մասամբ բաղկացած են երեք տնից, բացառությամբ «Այսօր զուարճացեալ» օրհնությունից, որը հորինված է կացուրդի ձևով (այբբենական ծայրակապով՝ 36 տուն):

7. Գերիշխում է սրբի կերպարի փառաբանական մեկնությամբ համահունչ խրոյստ, կա-

<sup>17</sup> Չայնբաղ Շարական, էջ 458:

<sup>18</sup> Նույն տեղում., էջ 454:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 404:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 140:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 409:

<sup>22</sup> Չայնագրեալ Շարական հոգևոր երգոց, էջ 322: Կանոնի «Այսօր զուարճացեալ» և «Աերիք ամենայն» Օրհնության և Ճաշու շարականների հեղինակն է համարվում Նովհաննես Երզնկացի Պյոտր, տն՝ Ն. Գաբրիել Անտիբլան, Բացադրություն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 191:

<sup>23</sup> Չայնագրեալ Շարական հոգևոր երգոց, էջ 669: Կանոնի «Ով երջանիկ» Օրհնությունը վերագրվում է 5-րդ դարի շարականագիրներին, որոնք են նեթադրաբար Մովսես Խորենացին կամ Նովհան Մանդակունին, Ն. Գաբրիել Անտիբլան, Բացադրություն շարականաց, էջ 427:

մային, հանդիսավոր տրամադրությունը :

8. Շարականները ծավալվում են հանդարտ տեմպերով՝  
Չափատր. Միջակ:

«Լերինք ամենայն»<sup>24</sup>  
(Նոտային օրինակ 1)

Andante

Լե - ռինք ա - մե - նայն այ - սոր ցըն - ծա - ցե  
 ընդ մե-ծա - պայ - ծառ փառ - սըն Սե - պու - հոյ  
 զե - ռա - զանց լե - ռինն, քան - զի ի նմա  
 քնա - կե - ցաւ սուր - բըն Գրի - զո - ռի - ոս,  
 սիւն լու - սոյ Հա - յաս - տան - եայց սուրբ  
 ե - կե - ղեց - ւոյ, ո - - - թով ցըն - ծան  
 ի փառս վեր - նոյն Սի - ով - նի:

9. Մեղեդիական ոճերն են՝ վանկայինը, մաս խառը՝ վանկային-մերվանկայինը:  
վանկային մեղեդիական ոճ.

<sup>24</sup> Չայնագրեալ Շարական հոգեւոր կրօն, էջ 332: Շարականների փոխադրությունը հայկական նոտագրությունից՝ եվրոպականի կապարել է փողերիս հեղինակը: Նոտային օրինակ 1-ում և 3-ում «e» նոտայի կողքի թեթ գծիկը նշանակում է «ցածր դո»:

«Որ կոչեցեր»<sup>25</sup>  
(Նոտային օրինակ 2)

Andante

Որ կո - չե - ցե - ր զգ - հե - ռաց-եալքս ի հար - սա - նիս  
քո մի - ած - նին ըմ - պել զբա-ժակն ի - մաս - տու - րբան  
ի ձե - ռն սըր - բոյն Գրի - գո - րի բա - րե - խո - սու -  
թեամբ սո - րա ո - ղոր - մեա մեզ ևս - տը - րուած։

10. Խորհրդանշական է կանոնների ձայնեղանակային մեկնությունը: Այսպես, Լուսավորչի կենդանի մահատակությանը նվիրված շարականները (առաջին կանոն), հորինված են հիմնականում Գ-կ (Օրհնություն, ժաշու) և Դ-կ (Հարց, Ողորմես, Տէր յերկնից) ձայնեղանակներում<sup>26</sup>, որոնց ձայնակարգի միջոցով (էոլ<sub>3</sub>), ինչպես հայտնի է՝ արտահայտվում են տրտմագին, ինքնամիտի հոգեվիճակներ<sup>27</sup>: Սակայն տվյալ դեպքում «Մարտիրոս յաղթող Տէր Գրիգորիոսը»<sup>28</sup> մարմնավորվում է գաղափարի համար ինքն իրեն զոհաբերելու, նահատակվելու պատրաստակամությամբ խրոխտ, առնական, կամային տրամադրությամբ.

«Այսօր զուարճացեալ»<sup>29</sup> (Նոտային օրինակ 3)

Միաժամանակ, Լուսավորչի հաղթարշավին, նաև նրա սուրբ մասունքների հայտնաբերմանը նվիրված շարականներում (երկրորդ կանոն) գերիշխում են լավատեսական ԲՁ-ը (Օրհնություն, Հարց, Տէր յերկնից, ԲՁ-ի ձայնակարգն է էոլ<sub>3</sub>) և էպիկական ԴՁ-ը (Մանկունք, Համբարձի, ձայնակարգը՝ էոլ<sub>4</sub>)<sup>30</sup>:

«Ով երջանիկ»<sup>31</sup> (Նոտային օրինակ 4)

<sup>25</sup> Չայնագրեալ Շարական հոգևոր երգոց, էջ 337: Վանկային-ներվանկային ոճի օրինակները փնսն նուրբային օրինակներ 1, 3, 4-ում:

<sup>26</sup> Կանոնի Մանկունք ԳՁ-ում է:

<sup>27</sup> Տե՛ս Կушпарев Х. С., Вопросы истории и теории армянской монодиатической музыки, Л., 1958, с. 437.

<sup>28</sup> Չայնագրեալ Շարական հոգևոր երգոց, էջ 326:

<sup>29</sup> Նույն փնդում, էջ 322:

<sup>30</sup> ԲՁ-ի և ԴՁ-ի ձայնակարգերի՝ էոլ<sub>5</sub> և էոլ<sub>4</sub>, հուզական բովանդակության մասին փնսն Կушпарев Х. С., ук. соч. сс. 448 և 465.

<sup>31</sup> Չայնագրեալ Շարական հոգևոր երգոց, էջ 669:

## (Նոտային օրինակ 3)

*Moderato*

Այ - սօր զուար - ճաց - եալ ցըն - ծայ ե - - -

կե - ղե - ցի, դրախտ աստ - դա - ծա - տունկ

ծաղ - կեալ, յոր - մէ տը - ուաւ մեզ տունկն ան -

մա - հու - թեան տէր Գրի - գո - - ըի - ոս,

և ախտ - ղովն իւ - թով ե - լից ըզ -

տի - - ե - զերս ա - մե - նայն:

## (Նոտային օրինակ 4)

*Andante sostenuto*

Ով եր - ջա - միկ տէր սուրբ

Գրի - գոր սըր - բու - թեան - ցըն պաշ -

տօն - եայ եւ ա - ռաջ - նորդ բա -

մա - լոր հօ - տի:

Ս. Գրիգոր Լուսավորչին Ավիրված կանոնները հայ հոգևոր երգաստեղծության լավագույն մնույթներից են, որոնք բնորոշվում են հորինվածքի բանաստեղծական և երաժշտական բաղադրիչների ներդաշնակ միասնությամբ: